# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

3 փետրվարի 2021 թվականի թիվ 20-Ա

ք. Երևան

## ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍՈՒՄ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ՝ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՍՓՌՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշման 43-րդ կետի 1-ին ենթակետով և հաշվի առնելով, որ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 150-Ա որոշմամբ հայտարարված հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մարզային՝ ՀՀ Արարատի մարզի և ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքներում սփռման մրցույթներին մասնակցելու համար հայտեր չեն ներկայացվել՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. 2020 թվականի դեկտեմբերի 11-ին հայտարարված հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մարզային՝ ՀՀ Արարատի մարզի և ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքներում սփռման մրցույթները հայտարարել չկայացած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ — Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2021թ. փետրվարի 3
ք. Երևան